




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1692

39

Հ. Ս. 10. Հ.

ՆԵՐՔԻՆ ԴՈՐԾՈՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

35


59 - 28

ՎԱՐՉԱԿԱԶՄ.

ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՀԿՈՒԹԻՒՆ.

(ԴԵԿՐԵՏՆԵՐ ԵՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ)



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԵՏԵՐԱԴԱՐԱՆ

ԷԶՄԻԱՄԻՆ

ԴԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՊԱՐԱՆ

1921



39-449-2

Հ. Մ. Խ. Հ.

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ


35 (47.925)

ՎԱՐՉԱԿԱԶՄ.

ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՀԿՈՒԹԻՒՆ.

(ԴԵԿՐԵՏՆԵՐ ԵՒ ՈՐՈԾՈՒՄՆԵՐ)



ՊԵՏԵԿԱՆ ՀՐԱՅՐԵԿՈՒԹԻՒՆ

ԷԶՄԻԱԾԻՆ

ԴԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՊԱՐԱՆ

1 9 3 1

Խորհուրդների, գործադիր կոմիտեների և խորհուրդների համագումարների ժամանակատեղի կանոնադրութեան մասին

1921 թ. նոյեմբերի 17

1 Պատգամաւորների խորհրդի, գործադիր կոմիտեների և խորհրդների համագումարների մասին.

1. Քաղաքի և գիւղի սահմաններում բարձրագոյն իշխանութիւն հանդիսանում է Պատգամաւորների Խորհուրդը:

2. Պատգամաւորների Խորհուրդների կազմը.—

ա) Քաղաքներում իւրաքանչիւր 50 հոգին մէկ պատգամաւոր: ԾԱՆՕԹ. 1.— Հայաստանի բոլոր քաղաքներից միմիայն երևանում և Ալեքսանդրոպոլում են ընտրում քաղաքային պատգամաւորական խորհուրդները:

ԾԱՆՕԹ. 2.— 150-ից պակաս բնակչութիւն ունեցող գիւղերն առանձին պատգամաւորական խորհուրդներ չեն ընտրում, այլ միասնում են մօտիկ մարզաւանակ վայրերի հետ և կազմելով գիւղական խմբեր, ընտրում են միացեալ պատգամաւորական խորհուրդ:

3. Գիւղերում ընթացիկ աշխատանքը վարելու համար Պատգամաւորական Խորհուրդն իր միջից ընտրում է Խորհրդի նախագահ, որը պատասխանատու է իրեն ընտրող պատգամաւորական խորհրդի առաջ:

ԾԱՆՕԹ.— 300-ից աւելի տուն ունեցող գիւղերը, գաւառամասային գործադիր կոմիտեների թոյլտուութեամբ, կարող են ընտրել նախագահութիւն, որը բաղկացած պիտի լինի երեք անձնաւորութիւնից, որոյսի իւր մէջ մտնում է նաև քարտուղարը:

4. Գաւառամասի սահմաններում բարձրագոյն իշխանութիւնը հանդիսանում է Պատգամաւորական Խորհուրդների գաւառամասային Համագումարը, իսկ համագումարների ընդհանուր ժամանակամիջոցում նման իշխանութիւն ներկայանում է Գործադիր կոմիտեն:

5. Գաւառամասային Խորհուրդների համագումարը կազմւում է Գիւղական Խորհուրդների ներկայացուցիչներից, ըստ որում 500 բնակիչը տալիս է մի պատգամաւոր. տեղական բանւորներից և ծառայողներից իւրաքանչիւր 25 ընտրող նոյնպէս մի պատգամաւոր՝ համաձայն ձեռնարկութիւնների և միութիւնների: Համագումարի կազմը չպէտք է անցնի 75 պատգամաւորից:

6. Գաւառամասային Խորհուրդների Համագումարն ընտրում է իր գործադիր մարմինը (Գաւառամասային Գործադիր կոմիտէ), որի անդամների թիւը պիտի լինի 3—7 հոգի:

Գաւառամասային Գործադիր կոմիտեն ամբողջապէս պատասխանատու է իրեն ընտրող գաւառամասային համագումարի առաջ:

7. Գաւառաւանաւորներն խորհուրդներն համագումարը հրաւիրւում է Գաւառաւանաւորներն Գործադիր կոմիտէի կողմից ըստ իր հայեցողութեան կամ գաւառաւանաւոր Գիւղական խորհուրդներն պահանջով այն դէպքում, երբ դա կազմում է ոչ պակաս, քան մէկ երրորդ մասը ամբողջ բնակչութեան, բայց ոչ ուշ վեց ամիսը — մի անգամ:

8. Գաւառի սահմաններում բարձրագոյն իշխանութիւնը հանդիսանում է գաւառի խորհուրդներն համագումարը, իսկ համագումարի ընդատման ժամանակամիջոցում նման իշխանութիւն է ներկայանում Գաւառական Գործադիր կոմիտէն:

9. Գաւառային խորհուրդներն համագումարը կազմւում է գաւառաւանաւորներն համագումարների ներկայացուցիչներէց, ըստ որում 1000 բնակիչ տալիս է մի պատգամաւոր, իսկ քաղաքի բնակւորներից իւրաքանչիւր 50 հոգին — մի պատգամաւոր, ըստ ձեռնարկութիւնների կամ միութիւնների: Գաւառական համագումարի պատգամաւորների ընդհանուր թիւը չպիտի անցնի 150 հոգուց:

10. Գաւառային խորհուրդներն համագումարն ընտրւում է իր Գործադիր մարմինը (Գաւառա-Քաղաքային Գործադիր կոմիտէ), որը թւով պիտի լինի 7—10 հոգի: Գաւառա-քաղաքային Գործադիր կոմիտէն ամբողջապէս պատասխանատու է իրեն ընտրող գաւառական համագումարի առաջ:

11. Գաւառային խորհուրդներն համագումարը հրաւիրւում է քաղաքա գաւառային գործադիր կոմիտէի կողմից ըստ իր հայեցողութեան կամ գաւառաւանաւորներն և քաղաքային խորհուրդների պահանջով այն դէպքում, երբ դա կազմում է ամբողջ գաւառի ազգաբնակչութեան մէկ երրորդ մասից ոչ պակաս, բայց ոչ ուշ, քան տարեկան մէկ անգամ:

12. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան սահմաններում բարձրագոյն իշխանութիւնը հանդիսանում է Հայաստանի խորհուրդներն համագումարը, իսկ համագումարների ընդհատման ժամանակամիջոցում նոյնպիսի իշխանութիւնը ներկայանում է Հայաստանի Կենտրոնական Գործադիր կոմիտէն:

13. Հայաստանի խորհուրդներն համագումարը կազմւում է գաւառական համագումարների ներկայացուցիչներէց, ըստ որում 5000 հոգին տալիս է մի պատգամաւոր, բայց ամբողջ կազմով ոչ աւել 200 պատգամաւորից:

14. Հայաստանի խորհուրդներն համագումարն ընտրւում է իր գործադիր մարմինը (Հայաստանի Կենտրոնական Գործադիր կոմի-

տէ), որը ամբողջապէս պատասխանատու է իրեն ընտրող խորհուրդների համագումարի առաջ:

15. Հայաստանի խորհուրդների համագումարը հրաւիրւում է Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտէի կողմից ըստ իր հայեցողութեան կամ զաւառային խորհուրդների պահանջով, երբ այդ կազմում է ամբողջ Հանրապետութեան ազգայնակութեան մէկ երրորդ մասից ոչ պակաս, բայց ոչ ուշ, քան տարեկան մէկ անգամ:

II Խորհրդային իշխանութեան օրգանների անելիքը տեղեւում

16. Խորհրդային իշխանութեան զաւառաքաղաքային, գաւառամասային և գիւղական գործադիր մարմինները, այլև պատգամաւորական խորհուրդները իրենց գործունէութեան առարկա են ունենալու:

ա. Կեսանքի մէջ կիրառել խորհրդային իշխանութեան համապատասխան բարձր մարմինների բոլոր որոշումները:

բ. Բոլոր միջոցները ձեռք առնելու առհալ վայրի կուլտուր տնտեսական կեանքը բարձրացնելու համար:

գ. Լուծումն առաջին բոլոր հարցերին, որոնք զուտ տեղական բնոյթ են կրում:

դ. Միացնել ամբողջ խորհրդային գործունէութիւնը առհալ տեքնոտրիայի սահմանում:

17. Խորհուրդների համագումարները և նրանց գործադիր կոմիտէները իրաւունք ունեն վերահսկելու տեղական խորհուրդների գործունէութիւնը:

18. Խորհրդային իշխանութեան օրգանների վրա գրած խընդիրներն իրագործելու համար խորհուրդներին (գիւղական), քաղաքային և գործադիր կոմիտէներին (գաւառական, գաւառամասային) կից կազմւում են համապատասխան բաժիններ վարիչների գլխաւորութեամբ:

III Այսիւ եւ պատսիւ ընտրողական իրաւունքի մասին.

19. Խորհուրդներում ընտրելու և ընտրւելու իրաւունքից օգտւում են անկախ գաւառանքից, ազգութիւնից, նստակեցութիւնից և այլն, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան երկսեռ քաղաքացիները, որոնց 18 տարին լրացած կլինի ընտրութիւնների օրին՝ հետևեալները:

ա. Նրանք, որոնք իրենց ապրուստի միջոցները ձեռք են բերում արտադրական կամ հանրօգուտ աշխատանքով, այլ և նրանք, որոնք զբաղւած են տնային տնտեսութեամբ, որ արտադրական աշխատանքի հնարաւորութիւն է ապահովում առաջինների հա-

մար, այն է՝ արդիւնաբերութեան, առևտրի, գիւղատնտեսութեան և այլ ճիւղերի մէջ զբաղւած բոլոր տեսակի ու կատեգորիայի բանւորների ու ծառայողների և շահ ստանալու նպատակով վարձու աշխատանքից չօգտուող գիւղացի երկրագործների համար:

բ. Կարմիր զինւորները:

գ. Այն քաղաքացիները, որոնք մտնում են սոյն յօդւածի «ա» և «բ» կէտերում թւած կատեգորիաների մէջ ու կորցրել են իրենց աշխատունակութիւնն այս կամ այն չափով:

ԾԱՆՈթ. 1—Տեղական խորհուրդները կենտրոնական իշխանութեան հաւանութեամբ կարող են պակասեցնել սոյն յօդւածում սահմանած տարիքի չափը:

ԾԱՆՈթ. 2—Հ.Ս. Խ. Հ. քաղաքացիներ չհամարւող, բայց Խորհրդային Հաստատունում պրոդ անձնաւորութիւններից ակտիւ ու պասիււնտրական իրաւունքից օգտւում են նրանք, ովքեր պարագում են հանրօգուտ աշխատանքով:

20. Ընտրելու և ընտրւելու իրաւունքից զուրկ են, թէկուզ և նրանք մտնեն վերև յիշւած կատեգորիաներից մէկն ու մէկի մէջ:

ա. Այն քաղաքացիները, որոնք վարձու աշխատաւորներ են պահում իրենց շահը բարձրացնելու նպատակով:

բ. Այն անձնաւորութիւնները, որոնք ապրում են ոչ աշխատաւորական եկամուտով, այն է կապիտալից ստացւած տոկոսներով, ձեռնարկութիւնների եկամուտով, գոյքից ստացւած արդիւնքով և այլն:

գ. Մասնաւոր առևտրականները, առևտրական ու վաճառականական միջնորդները:

դ. Վանականներն ու եկեղեցու և կրօնական կույտերի հոգևոր սպասաւորները:

ե. Ցարական ու դաշնակների ոստիկանութեան, յատուկ բաժանմունքների և զաղտնի ոստիկանութեան բաժանմունքների գործակալներն ու ծառայողները, այլ և խմբապետները:

զ. Նրանք, ովքեր սահմանւած կարգով ճանաչւում են հոգեկան հիւանդներ կամ խելախորոյաներ, ինչպէս և հովանաւորութեան տակ գտնւողները:

է. Այն բոլոր անձնաւորութիւնները, որոնք շահադիտական և արատաւորող յանցագործութիւնների համար դատապարտւած են օրինական կամ դատական դատավճռի կարգով:

21. Ներքին Գործերի Ժողովրդական կոմիտարը պարտաւորւում է մշակելու և հրատարակելու համապատասխան հրահանգներ:

22. Ներկա կանոնադրութիւնը համարւում է ժամանակաւոր,

մինչև որ խորհուրդների առաջին համագումարում կմշակւի ու
կհաստատուի Հ. Ս. Խ. Հ. Սահմանադրութիւնը:

ժողովուրդների Խորհրդի Նախագահ՝
Ա. Մեանիկեան (Ալ. Մարտունի)
Ներքգործողում՝ Աւիս
Ժողկոմխորհի Քարտուղար՝ Մ Ղարաբէկեան

Հր. , Խորհրդային Հայաստան՝
1921 թ. Նոյեմբերի 20 № 17

Գ Ե Կ Ր Ե Տ

Հ. Ս. Խ. Հ. վարչական վերաբաժանումների մասին

1921 թ. յուլիսի 20.

1 Հ. Ս. Խ. Հանրապետութեան այժմեան տերիտորիան
կառավարչական բոլոր ճիւղերի համար վարչական տեսակէտից բա-
ժանուում է հետեւեալ երեսուն և երեք (33) գաւառամասերի

1. Ղամարլուի, 2. Աղհամզալուի, 3. Բաշ-Գեառնիի, 4. Կոտայքի
(կենտրոնը Քանաքեռ) 5. Զանգիբասարի (կենտրոնը Փարաքար)
6. Ախտայի, 7. Սամաղարի, 8. Աշտարակի 9. Աբարանի (կենտ-
րոնը Ալիքուշակ) 10. Սարգարաբաղի (կենտրոնը Ղուրղուզուլի)
11. Թալինի 12. Մոլլա Գեօքչայի 13. Քաֆթարլուի 14. Դուլքենդի
15. Ղզղոշի 16. Աղբաբայի (կենտրոնը Ղարանամազ) 17. Զալալ-
օղլու 18. Ալլահվերդիի 19. Ուզունլարի 20. Դոդսի 21. Ղարաքիլի-
սայի 22. Համամլուի 23. Բօղիքենդի 24. Դիլիջանի 25. Իջևանի
26. Կոտքենդի 27. Շամշադինի (կենտրոնը Թաուզդալա) 28. Կար-
միր գիւղի 29. Բասարգեշարի 30. Ղարանլուի 31. Նոր-Բայազէդի
32. Քեշիշքենդի 33. Գնդեաղի:

2. 1-ն յօդւածում յիշւած գաւառամասերը կազմում են ութ
գաւառ:

Ա. Երևանի գաւառը կազմում են հետեւեալ գաւառամասերը՝

1. Ղամարլուի 2. Աղհամզալուի 3. Բաշ-Գեառնիի 4. Կոտայքի
և 5. Ախտայի:

Բ. Էջմիածնի գաւառը կազմում են հետեւեալ գաւառամասերը՝

1. Զանգիբասարի 2. Սամաղարի 3. Աշտարակի 4. Աբարանի
5. Սարգարաբաղի 6. Փարաքարի:

Գ. Ալէքսանդրապօլի գաւառը կազմում են հետեւեալ գաւառա-
մասերը՝

1. Թալինի, 2. Մոլլա-Գեօքչայի 3. Քաֆթարլուի 4. Դիւլքենդի

5. Աղբաբայի:

Գ. Ղարաքիլիսայի գաւառը կազմում են հետևեալ գաւառամասերը՝

1. Ղարաքիլիսայի, 2. Համամլուի և 3. Բօզքենդի

Ե. Լօռու գաւառը (Ջալալօղլի կենտրոնով) կազմում են հետևեալ գաւառամասերը՝

1. Ջալալօղլու 2. Ալլահվերդիի 3. Ուզունլարի և 4. Դսեղի:

Զ. Իջևանի գաւառը կազմում են հետևեալ գաւառամասերը՝

1. Իջևանի, 2. Դիլիջանի 3. Կոտքենդի 4. Շամշադինի և 5. Կարմիր գիւղի:

Է. Նոր-Քայազէղի գաւառը կազմում են հետևեալ գաւառամասերը՝

1. Նոր-Քայազէղի 2. Ղարանլուխի 3. Բասար-Գեշարի:

Ը. Դարալագեղի գաւառը (Քեշիշքենդ կենտրոնով) կազմում են հետևեալ գաւառամասերը՝

1. Քեշիշքենդի և 2. Գնդէւաղի:

3. Երևան քաղաքը Երևանի գաւառի մէջ չէ մտնում և վարչական տեսակէտից գաւառին համապատասխան առանձին միաւոր է կազմում:

4. Ալէքսանդրապօլ և Նոր-Քայազէղ քաղաքները՝ մտնելով նույնանուն գաւառների մէջ՝ վարչական տեսակէտից իրենց գաւառամասերին համապատասխան միաւորներ են կազմում:

5. Գաւառամասերի սահմանների փոփոխումը, դոցա նոր կենտրոնների որոշումը, գաւառամասերի վերաբաժանումը գաւառների միջև, վերջիններիս նոր կենտրոնների որոշումը և գաւառից կամ գաւառամասերից քաղաքների գատումը կատարում է Հայաստանի ժողկոմների Խորհուրդը՝ Ներքգործժողկոմի առաջարկութեամբ և համապատասխան Յեղկոմի միջնորդութեամբ:

6. Հ. Ս. Խ. Հ. բնակած վայրերի ցուցակը ըստ գաւառամասերի կազմում և պահում է Ներքգործժողկոմատուր:

Ժողկոմների Խորհրդի Նախագահ՝ Ա. Մեամնիկեան (Ալ. Մարտոզնի)

Ներքգործժողկոմ՝ Աւիս

Քարտուղար՝ Մ. Ղարաբէկեան

Հր. «Խորհրդային Հայաստան»

1921 թ. Օգոստոսի 2, № 141.

Դ Ե Կ Ր Ե Տ

Հ. Ս. Խ. Հ. սերիսորիայի վարչական վերաբաժանման գեկրեսի
փոփոխման եւ լրացման մասին

1921 թ. Օգոստոսի 16

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան
տերիտորիայի վարչական վերաբաժանման գեկրեսի 2-րդ յօդւածի
այն մասը, որ վերաբերում է Երևանի գաւառին՝ փոփոխել այսպէս—

«Երևանի գաւառը կազմում են հետևեալ գաւառաւանները՝—
1. Ղամարլուի, 2. Վեզիր-Բառարի (Բոյուք-Վեզիր կենտրոնով) 3.
Աղճամզալուի, 4. Բաշ-Գառնիի, 5. Կոտայքի եւ 6. Ախուրյանի»:

Ժողովրդական Կոմիսարներին Խորհրդի Նախագահ՝

Ա. Մեամսիկեան (Ալ. Մարտունի)

Ներքգործ ժողկոմի Տեղակալ՝ Շահգեալեան

Քարտուղար՝ Մ. Ղարաբեկեան

Դ Ե Կ Ր Ե Տ

Ջանգեզուրի գաւառ կազմելու մասին

1921 թ. Օգոստոսի 31.

Ի լրումն ժողկոմների Խորհրդի 1921 թ. յունիսի 20—ի Հայ-
աստանի վարչական վերաբաժանման գեկրեսի՝ ժողկոմների Խոր-
հուրդը որոշեց. Ջանգեզուրի Հ. Ս. Խ. Հանրապետութեանը կցւած
մասից կազմել առանձին Ջանգեզուրի գաւառ (կենտրոնը՝ Գորիս), —
բաղկացած հետևեալ գաւառակներից՝— Գորիսի, Դիսի (Տեղ.) Տաթևի,
Սիսիանի (կենտրոնը Բռնակոթ), Ղափանի (կենտրոնը Ղաթարի
գործարանները) եւ Մեղրիի:

Ժողկոմխորհի Նախագահ՝ Ա. Մեամսիկեան (Ալ. Մարտունի)

Ներքգործ ժողկոմ՝ Պ. Մակինցեան

Ժողկոմների Խորհրդի Քարտուղար՝ Մ. Ղարաբեկեան

Հր. «Խորհրդային Հայաստան»

1921 թ. Սեպտեմբերի 8. № 168

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ներքին Գործոց Ժողովրդական Կոմիսարիատի կանոնադրութեան
մասին

1921 թ. Սեպտեմբերի 15

1. Ներքգործ ժողկոմատին են յանձնւում Հ. Ս. Խ. Հ. սահ-

մաններում յեզափոխական կարգի պահպանումն ու տեղական յեղիւմների վարչական գործունէութեան ղեկավարութիւնը:

2. Ներքգործժողկոմաւի գլուխը ժողովրդական կոմիտարն է:

3. Ներքգործժողկոմի աշխատանքներին մասնակից են նրա երկու տեղակալները:

Ներքգործժողկոմի բացաւայութեան ժամանակ ժողկոմների Խորհուրդը տեղակալներից մէկին է յանձնում նրա պարտականութիւնների կատարումը:

4. Ներքգործժողկոմին կից՝ նրա նախագահութեամբ կազմւում է կոլլեգիա, բաղկացած ժողկոմի տեղակալներից ու երկու յատուկ նշանակւած անդամներից:

5. Ս. Խ. Հ. Արտակարգ Յանձնաժողովի նախագահն ի պաշտօնէ Ներքգործժողկոմաւի կոլլեգիայի անդամ է:

6. Ներքգործժողկոմի տեղակալներին ու կոլլեգիայի այլ անդամներին նշանակում է ժողկոմների Խորհուրդը Ներքգործժողկոմի առաջարկութեամբ:

7. Ներքգործժողկոմաւի ու նրան ենթակայ հիմնարկութիւնների գործունէութեան համար Ներքգործժողկոմն ամբողջովին պատասխանատու է ժողկոմների Խորհրդի առաջ:

8. Կոմիտարիատի կոլլեգիայի իրաւասութեանն են պատկանում ա. Հսկողութիւն Ներքգործժողկոմաւի իրաւասութեանց պատկանող խնդիրներին վերաբերող բոլոր ղեկրեանների ու կարգադրութիւնների տեղերում կատարման վրայ:

բ. Ներքգործժողկոմաւի կողմից ժողկոմների Խորհրդին ի հաւատարմութիւն տրուող ղեկրեանների ու որոշումների նախագծեր կազմելը և գործող որոշումների սահմաններում տնօրինութիւններ ու հրահանգներ հրատարակելը:

գ. Կոմիտարիատին ենթակայ վարչական անձերի և հիմնարկների դէմ սահմանւած կարգով տրւած բողոքների որոշումը:

դ. Ներքգործժողկոմաւի բոլոր կենտրոնական ու տեղական հիմնարկութիւնների ելմամբ նախահաշիւների քննութիւնը:

ե. Հ. Ս. Խ. Հ. երկրի վարչական վերաբաժանման վերաբերող հարցերի քննութիւնը:

զ. Ներքգործժողկոմաւի կենտրոնական հիմնարկութիւնների պատասխանատու ծառայողների վրայ ղիսցիպլինար պատիժներ գնելը:

է. Ներքգործժողկոմաւին ենթակայ պաշտօնական յանցանքներում մեղադրուող պաշտօնատար անձանց դէմ հետապնդում յարուցանելը և

բ. այն բոլոր հարցերի քննութիւնը, որ ժողկոմը կը յանձնի կոլլեգիային ի քննութիւն:

8. Կոլլեգիայի գործերը վճռում են ձայների մեծամասնությամբ անուագն երեք անգամի ներկայությամբ, հաշվելով այդ թվում և ժողովին կամ նրա պարտականութիւնները կատարող տեղակալին:

9. Ներքգործողկոմտար կազմում են գործերի կառավարութիւնը, իրաւախորհրդական մասը և կազմակերպչա-վարչական, տեղեկատու-վիճակագրական, կոմունալ, քաղաքացիական կացութեան ակտերի գրանցման, ֆինանսական բաժինները և միլիցիայի զինուոր վարչութիւնը:

10. Կոմիտարիատի գործերի կառավարութիւնը ա. կազմում է միւս բաժինների իրաւասութեանը չը վերաբերող հարցերի մասին կոլլեգիային առիք զեկոյցներ և վարում է կոլլեգիայի նիստերի օրագիրը, բ. վարում է կոմիտարիատի ելից և մօից ընդհանուր տոմարագրութիւնը (բեզիստրասուրա), գ. իր դիւսնով սպասարկում է կոմիտարիատի բոլոր բաժինները, դ. ներքգործողկոմատի կենտրոնական հիմնարկութիւնների աշխատակիցների ցուցակն է պահում, ե. ներքգործողկոմատի կենտրոնական ու տեղական հիմնարկութիւնների աշխատակիցների ծառայութեան՝ ընդունելու, արձակելու, տեղափոխման, արձակուրդի ու գործուղման մասին հրամաններ է կազմում, նշանակում անձերին մանդատներ է տալիս և ընդհանրապէս անձնական կազմին վերաբերեալ գրազրութիւն է վարում, զ. գրազրութիւն է վարում իրենց բովանդակութեամբ ուրիշ բաժինների իրաւասութեանը չվերաբերող գործերի մասին, է. կոմիտարիատի աշխատակիցներին տալիս է գործուղման փաստաթղթերը առաջարկներ (պրեդպիտանիա), զանազան վկայականներ, անցաթղթեր և այլն, բ. հաշւառման է ենթարկում հանրապետութեան կենտրոնական հիմնարկութիւնների կողմից գործող գլուղներին տրուող, ինչպէս և ծառայութեան գործով երեան ժամանող անձանց մանդատներն, ու վարում է արխիւը, թ. վարում է կոմիտարիատի տնտեսութիւնը և անօրինում գոյքը:

11. Իրաւախորհրդականի իրաւասութեան են պատկանում ա. կոմիտարիատի բաժինների ու նրան ենթակայ բոլոր հիմնարկութիւնների կողմից յարուցած հարցերի ու գործերի մասին եզրոտփակումներ տալն ու կարծիքներ յայտնելը, բ. ներկայութիւնը կոմիտարիատի գործերով դատական հիմնարկներում, գ. կոլլեգիայի քննութեանը աւելող դեկրետների, որոշումների, շրջաբերականներին և այլի խմբագրման մասնակցելը և դ. օրէնսդրութեան շրջանում ներքգործողկոմատի առանձին յանձնարարութիւնների կատարումն:

12. Կազմակերպչա-վարչական բաժնի իրաւասութեանն են

պատկանում՝ ա. տեղական վարչութեան կազմակերպման գործերի վարելը, բ. հսկողութիւնը ներքգործժողովումատին ենթակայ հիմնարկութիւններին տրւած կարգադրութիւնները ժամանակին կատարելու և նրանց գործողութիւնների օրինակատարութեանը, գ. հսկելը, որ ներքգործժողովումատին ենթակայ հիմնարկութիւնները ժամանակին ներկայացնեն պարբերական զեկոյցներ իրենց գործնէութեան մասին, դ. յեղկոյցների պատասխանատու աշխատակիցների անձնական ու միլիցիայի հրամանատարական կազմերի ցուցակներ պահելը, է. գաւառները աշխատակիցներ ուղարկելը՝ ներքգործժողովումատին ենթակայ հիմնարկութիւններին հրահանգներ տալու համար:

13. Տեղեկատու վիճակագրական բաժնի իրաւասութեան են պատկանում. ա. գաւազեղկոյցներին ու գաւառակային յեղկոյցներին օրէնսդրական ու պաշտօնավարական հրահանգչական նիւթ մատակարարել և փոստային վարչութեան հետ մշտական կապ ունենալով հսկել, որ այդ նիւթը ժամանակին ու ճշտութեամբ համախառնները, բ. ներքգործժողովումատի մարմինների գործունէութեան մասին մամուլում երևան եկող հաղորդակցութիւնները ժողովին ծանօթացնելը և անհրաժեշտ դէպքում հերքումներ ու պարզաբանումներ ղեկեղելը, գ. ներքգործժողովումատի ու նրա տեղական մարմինների գործնէութեան մասին մամուլին պարբերաբար տեղեկացնելը, հաւ տեղերից ստացւող տեղեկութիւնները մամուլին հաղորդելը և դ. Գաւազեղկոյցներին կից վիճակագրական ենթաբաժնի գործունէութեան ղեկավարութիւնն ու տեղերից ստացւող նիւթերն ի մի ժողովելը:

14. Կոմունալ բաժնի իրաւասութեանն են պատկանում, ա. Քաղչեղկոյցների ու գաւազեղկոյցների կոմունալ ենթարտմանների կոմունալ գործունէութեան ղեկավարութիւնը, բ. նրանց գործունէութեան մասին ամփոփ տեղեկութիւններ տալը, գ. Բնակարանային գործը վարող հիմնարկութիւնների համար կանոնադրութիւններ ու հրահանգներ մշակելը և ընհանրապէս Հանրապետութեան բնակարանային քաղաքանութեան ղեկավարութիւնը, դ. ձեռնարկութիւնների մուխիցիլպալիգացիայի կարգի ու ձևի մասին և մուխիցիլպալիգացիայի ենթակա ձեռնարկութիւններն ու ժողովրդական Գերտուքոյն Խորհրդի իրաւասութեան տակ չգտնւող արտադրական ընդթռւնեցող քաղաքային ձեռնարկութիւնները կառավարելու մասին կանոնադրութիւններ ու հրահանգներ մշակելը, ե. քաղաքներում, քաղաքանութեամբ ժողովրդական Տնտեսութեան Գերագոյն Խորհրդի իրաւասութեան վերաբերող, վերանորոգման ու կառուցման աշխա-

տանքներ կատարելու համար ընդհանուր կանոնադրութիւններ մշակելը, քաղվեղկոմիտեի ու գաւյեղկոմիտեի կոմունալ ենթաբաժնիների ել և մտից նախահաշիւները ձեռք կազմելուն և կատարելուն հսկելը, գ. Կոմունալ տնտեսութեան կարիքների համար ժողովրդական գանձարանից յեղկոմիտեի կողմից փոխառութիւններ ու նպաստներ խնդրելու կարգին վերաբերեալ ցուցումներ տալը, է. Ընդհանրապէս քաղաքացիների բարեկարգումը շօշափող անհրաժեշտ գրականութիւնն ու տեղեկութիւնները յեղկոմիտեին մատակարարելը:

15. Քաղաքացիական կացութեան ակտերի գրացման բաժնի իրաւասութեան են պատկանում՝ ա. Քաղաքացիական կացութեան ակտերի գրանցման տեղական մարմինների գործունէութեան հըսկումը, բ. Նախորդների կողմից սահմանաժ աներով գրքերը միատեսակ վարելուն հսկելը և նրանց հրահանգներ տալը, գ. Բաժնին ներկայացուող աւետարանների հիման վրայ, դաւառական քաղկացակող գրացման տեղական մարմիններից տրամադրւած անձերի ընդհանուր ալֆաւիտների կազմելը, նաև ստացւած նիւթերի ի մի ժողովելը, դ. Ինչպէս հիմնարկութիւններին, նոյնպէս և շահագրգռուած անձանց, տոմարներից տեղեկանքներ ու արձանագրութիւններ տալը և ե. Օտար երկրացիներին Հ. Ս. Խ. Հ. քաղաքացի ընդունելու և այդ քաղաքացիութիւնից դուրս գալուն վերաբերեալ գործերի վարելը:

16. Ֆինքաժնի իրաւասութեան են պատկանում՝ ա. Կոմիտարիատի կենտրոնական ու տեղական հիմնարկութիւնների ընդհանուր ել և մտից նախահաշիւներ կազմելը, բ. Ժամանակաւոր ծախքային ցուցակներ կազմելը, գ. Վարկերի յատկացումները յեղկոմիտեին բաշխելը, դ. Կոմիտարիատի նախահաշիւ կատարումը և գործեր ու հաշեւտութիւն վարելը, է. Ներքգործժողկոմատին ենթակայ հիմնարկութիւնների ֆինանսական նախահաշիւների կանոնաւոր կազմելուն ու կատարման հսկելը, գ. Նոյն հիմնարկութիւնների հաշւապահութեան, գործաւարութեան, հաշեւտութեան ու առանձին գրամական գումարների ստուգումը և է. Իրեր, նիւթեր, մթերքներ, և այլն ձեռք բերելու համար ներքգործժողկոմատի ու միւս Խորհրդային հիմնարկութիւնների միջև հաշւարկային գործառնութիւններ կատարելը:

17. Միլիցիայի գլխաւոր վարչութեան կազմակերպութիւնը որոշում է յատուկ կանոնադրութեամբ:

Ժողկոմիտեի Խորհրդի Նախագահ՝

Ա. Մեանիկեան (Ս. Մարտունի)

Ներքգործժողկոմ՝ Պ. Մակինցեան

Քարտուղար՝ Մ. Ղարաբէկեան

Դ Ե Կ Ր Ե Տ

Արտակարգ յանձնաժողովի և Յատուկ բաժնի իրաւասութեան մասին.

1921 թ. Ապրիլի 15

Արտակարգ Յանձնաժողովին և Յատուկ Բաժնին ենթակայ են հետևեալ գործերը՝

1. Լրահսութեան.
2. Հակա-յեղափոխութեան.
3. Չարաշահութեան.
4. Ըստ պաշտօնի յանցագործութիւնների.
5. Արբեցողութեան՝ պատերազմական գրութեան ժամանակամիջոցի ընթացքում.
6. Հրձիգութեան.
7. Երկաթուղիների և ասհատարակ հաղորդակցութեան և կապակցութեան միջոցների փչացման.
8. Չէնք, հրազինային միջերթեր և պայթուցիկ նիւթեր պահելու համար:

Նախագլխելումի՝ Ս. Կասևան

Արդժողկոմ՝ Վարդանեան

Հր. «Կոմունիստ»

1921 թ. Ապրիլի 23 № 71

Դ Ե Կ Ր Ե Տ

Խուզարկութիւնների, հանույթների և ձերբակալութիւնների կատարման մասին

1921 թ. Յունիսի 3

Մենք տեսակի խուզարկութիւն, հանույթ և ձերբակալութիւն կատարում են բացառապէս ներքոյիշեալ հիմնարկութիւնների որոշումների և զրաւոր կարգադրութիւնների (օրդերի) հիման վրայ՝

1. Արդժողկոմի գաղաքննչական մարմինների, այն է՝ ժողովրդական դատաւորների, ժողովրդական քննիչների և յեղափոխական արիւրուստի որոշումների և զրաւոր կարգադրութիւնների հիման վրայ.

2. Այն գործերի վերաբերմամբ, որ 1921 թ. 15 Ապրիլի ղեկիւրեաի համաձայն ենթակա են Արտակարգ Յանձնաժողովներին, Հ. Ս. Խ. Հ. Արտակարգ Յանձնաժողովների Յատուկ բաժնի և Արտակարգ Յանձնաժողովների տեղական մարմինների (ռուսաբոլոշո)՝

իսկ երկաթուղիները շրջանում Բ. Փ. Արտ. Յանձաժողովի որոշումների և գրաւոր կարգադրութիւնների հիման վրայ:

3. Միլիցիայի և քրէական հետախուզութեան մարմինները, իբրեւ հետաքննութիւն կատարող մարմիններ, իրաւունք ունին նախապէս ձերբակալելու յանձադրութեան մէջ կասկածուող անձանց, կատարելու նոցա մօտ խուզարկութիւն և յանցանքի դործիքների և յանցանքին անմիջապէս վերաբերող իրերի հանայթիւ: Միլիցիան իրաւունք ունի ձերբակալելու ոչ աւել, քան 24 ժամով, իսկ քրէական հետախուզութեան մարմինները ոչ աւելի, քան 7 օրով, որպիսի ժամանակամիջոց լրանալուց ոչ ուշ, պարտաւոր են ձերբակալածներին ըստ նոցա վերաբերող դործերի և իրային ապացոյցների հետ միասին յղել ժողովրդական դատաւորներին և ժողովրդական քննիչներին և այլն, այս դեկրետի առաջին և երկրորդ կէտերում յիշած մարմիններին ըստ պատկանելոյն: Ձերբակալման մասին կայացած որոշումների պատճէնները անյապաղ հաղորդուած են համապատասխան ժողովրդական դատաւորին:

4. Բոլոր գորական հաստատութիւններին և անձանց արգելուած է կատարել խուզարկութիւն, հանայթիւ և ձերբակալութիւն, որը պիտի կատարեն միայն Հայաստանի Կարմիր Բանակի Յատուկ բաժինը, դիւիզիայի յատուկ բաժանմունքները և դիւիզիայի գորական յեղափոխական Տրիբունալը և նրա շրջիկ նստաշրջանը, իրենց օրինական իրաւասութեանց սահմաններում: Եւ յատուկ Բաժինների պետի և Տրիբունալի Նախագահի ստորագրութեամբ և կնիքով:

5. Խուզարկութիւններին ու հանայթիւներին ներկայ լինելու համար հրաւիրուած են միլիցիան և քաղաքներում Տնային Կոմիտէները, իսկ զիւղերում տեղական Յեղկոմների ներկայացուցիչները և երկու բնիքերակայ:

6. Բոլոր այն ձերբակալութիւնները, խուզարկութիւնները, հանայթիւները, որ կատարուած են այն դեկրետով չիազօրւած անձերի և մարմինների կողմից և առանց համապատասխան որոշումների և օրգերի, ապօրինի են համարուած, իսկ մեղաւորները ենթարկուած են դատական և քաղաքական պատասխանատւութեան:

Ժողկոմների Պորհրդի Նախագահ՝

Ա. Սեւանիկեան (Է. Մարտոնի)

Արգժողիտի Տեղակալ՝ Ա. Մալխասեան

Ժողկոմխորհի Բարտուղար՝ Մ. Ղարաբէկեան

Հր. „Պորհրդային Հայաստան“

1921 թ. Յուլիսի 10 № 123

Գ Ե Կ Ր Ե Տ

Պատասխանատու աշխատակիցների ձեռքակալութիւնների մասին

1921 թ. Օգոստոսի 3

1. Հրահանգել հակաշեղափոխութեան, չարաշահութեան և պաշտօնէական դեղծումների դէմ կռուող Արտակարգ Յանձնաժողովին, որ նա խորհրդային հիմնարկութիւնների պատասխանատու աշխատակիցների ձեռքակալութիւնների վերաբերմամբ իր կայացրած որոշումների և գործի հանգամանքների մասին նախօրոք յայտնէ՝ կենտրոնական հիմնարկութիւններում ծառայողների նկատմամբ համապատասխան ժողովրդական կոմիտարին, իսկ տեղական հիմնարկութիւններում՝ ծառայողների նկատմամբ էլ Գաւառական Յեղկոմի նախագահին:

2. Այն դէպքում, երբ նախապէս անհնարին է իմաց տալ, պէտք է ձեռքակալելուց յետոյ մինչև 24 ժամը յայտնել այդ տեղեկացնելով նոյնպէս ձեռքակալւածին առաջադրուող մեղադրանքի էութեան մասին:

3. Տալ ժողովրդական կոմիտարներին, իսկ գաւառներում էլ Գաւառյեղկոմների նախագահներին իրաւունք ազատելու ձեռքակալւածներին իրենց կամ իրենց տեղակալների գրաւոր երաշխաւորութեամբ:

Ժողկոմների Խորհրդի նախագահ

Ա. Մեամսիկեան (Ալ. Մարտունի)

Ներքոգործ ժողկոմ՝ Աւիս

Ժողկոմների Խորհրդի Գարտուղար՝ Մ. Հաքաւէկեան

Հր. „Խորհրդային Հայաստան“

1921 թ. Օգոստոսի 18 № 147

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Խուզարկութիւնների, հաճոյքների և ձեռքակալութիւնների կատարման կարգի դեկրետի գործադրման մասին

1921 թ. Սեպտեմբերի 6.

1 Միլիցիան և քրեական հետախուզութեան մարմինները իրաւունք ունեն խուզարկութիւններ կատարելու աներում և այլ բնակեալ շէնքերում միայն այն դէպքում, երբ հիմնաւոր կապած կայ, որ այդ տեղերում թաղւած են մեղադրեալը կամ յանցագործութեան առարկան կամ գործի լուսաբանութեան համար անհրաժեշտ

իրային ապացոյցներ: Խուզարկութեան ժամանակ հանոյթի ենթա-
կայ են միայն յանցագործութեան գործիքները և յանցագործու-
թեանը հետ անմիջական առնչութիւն ունեցող իրերը:

2. Միլիցիան և քրէական մարմինները, իրաւունք ունեն
յանցագործութեան մէջ կասկածող անձանց նախօրօք ձերբակա-
լելու միայն հետեւեալ դէպքում—

ա. երբ կասկածող անձը բռնուում է յանցագործութեան կատար-
ման ժամանակ կամ կատարումից անմիջապէս յետոյ.

բ. երբ յանցագործութիւնից տուժողները կամ թէ աւանա-
տեաները ուղղակի մատնացոյց են անում կասկածող անձի վրա.

գ. երբ կասկածող անձի վրա կամ նրա բնակարանում գտ-
նւին յանցագործութեան աւանդներ հետքեր.

դ. երբ յանցագործութիւն ապացուցող իրերը պատկանում են
կասկածող անձին կամ գտնուում են նրա մօտ.

ե. երբ կասկածող անձը փախուստի փորձ է անում, կամ
բռնուում է փախուստի ժամանակ, կամ թէ փախուստից յետոյ:

3. Խուզարկութիւնների կատարման ժամանակ՝ միլիցիայի և
քրէական հետախուզութեան մարմինները պիտի գործադրեն հետե-
ւալ կանոնները:—

Յիշած գործողութիւնները պիտի կատարւեն՝—

Պարտադիր մասնակցութեամբ—

ա. Քաղաքներում համապատասխան տնային կոմիտէի, գիւ-
ղերում և այլ վայրերում՝ տեղական յեղկոմի ներկայացուցչի:

բ. Տեւալ շրջանի քաղաքացիներից երկու ընթերակաների,
որոնցից առնւազն մէկը պիտի լինի զրազէտ:

գ. Գործի հետ առնչութիւն ունեցող անձանց՝ մեղադրեալի և
մեղադրողի:

դ. Խուզարկող տան կամ բնակարանի տիրոջ կամ նրա
քաջակալութեան ղէպքում նրա տեսչիներից մէկի:

բ. Անպատճառ ցերեկը, բացի անյետաձգելի դէպքերից:

4. Ամեն մի խուզարկութեան և նախապէս կատարւած ձեր-
բակւման մասին միլիցիան և քրէական հետախուզութեան մարմին-
ները պարտաւոր են՝—

ա. ներկայացնել գրաւոր կարգադրութիւն (օրդէր) և յայտա-
րարել շահագրգռուած անձանց՝ ձեռնարկող գործողութիւնների
նպատակի մասին:

բ. Կազմել յատուկ արձանագրութիւն մանրամասնօրէն յիշա-
տակելով:—

ա. Ո՛վ, երբ և որտեղ կատարել այս կամ այն գործո-
ղութիւնը:



բ. Ու՞մ յանձնարարութեամբ և ի՞նչ նպատակով.

գ. Ո՞վ է ներկայ գործողութիւնները կատարման ժամանակ

դ. Ի՞նչ է պարզել գործողութիւններին.

ե. Ի՞նչ իրեր են հանոյթի և հետախուզութեան ժամանակ. դուք հանել ու հետաքննութեանը կցել և եթէ ի պահ են արբւել՝ ու՞մ են արբել

զ. Քրճանագրութիւնը պիտի կարգալ գործողութեանը ներկայ կողմերին ու տալ ստորագրելու գրագէտներին:

զ. Մեղարկութեան և հանոյթի ժամանակ դուք հանւած իրերն ու առարկաները պիտի մանրամասն ցուցակադրել և ցուցակը կցել հետաքննութեան ու ամբողջ գրազրութեանը, իրային ապացոյցների հետ միասին, ուղարկել յստ պատկանելոյն: Եթէ անհրաժեշտ է իրային ապացոյցները ի պահ տալ՝ իրերն այդ նպատակով պէտք է յանձնել անային կոմիտէին կամ յեղկոմի ներկայացուցչին՝ ցուցակով, ստացական անելով նրանից:

ե. Ջերբակալւած անձանց վերաբերմամբ պիտի որոշում կայացնեն ձերբակալման մասին, յիշատակելով որոշումը (օրդերը) կազմելու ժամանակը, տեղը, ձերբակալածի անունը, հայրանունը, ազգանունը, բնակավայրն ու հասակը, այն դորձը, որի համար ձերբակալւած է, ձերբակալման պատճառները, կարանաւորման տեղը, ու՞մ իրաւասութեան է յանձնուում, իսկական որոշումը. — ձերբակալւածին յայանելուց և նրա ստորագրութիւնը պատնալուց յետո, պիտի կցել հետաքննութեանը, իսկ որոշման պատճէնը՝ անյապաղ ուղարկել համալսարանական Ժողովրդական դատաւորին:

Ներքգործողիւմ՝ Պ. Մակինցեան

Երդժողկոմ՝ Ա. Կարլնիւան

Հր. «Պրնրդային Հայաստան»

1921 թ. Մեպտեմբերի 18 № 175.

Դ Ե Կ Բ Ե Ց

Փոխադրական պահկութեան մասին

1921 թ. Օգոստոսի 3

1. Մահմանել փոխադրական պահկութիւն պետական տնտեսութիւնը բարելաւելու, վնասորական, պարենաւորման, վառելիքի ու այլ բեաների գէպի քաղաքները, երկաթուղիները և այլ ընդունելութեան վայրեր փոխադրութիւնը վերականգնելու, նոյնպէս

և գործուղող պետական ծառայողներին նշանակած վայրերն ուղարկելու համար:

2. Փոխադրական պահկութեան իրագործումը կենտրոնում ու դիւզերում յանձնել յատուկ յանձնաժողովի, բաղկացած Ներք. գործօղկումատի, Պարօղկումատի, Ժողանխորհրդի և Աշխույժումատի ներկայացուցիչներէց, մինչև որ ամենուրեք Աշխույժումատը հնարաւորութիւն կունենա կենտրոնացնել զործն իր ձեռքը:

Յանձնաժողովին է վերապահուում փոխադրական պահկութեան ընդհանուր ղեկավարութիւնը:

3. Տեղական անտեսական կազմակերպութիւնները հարց ևն յարուցանում գաւառակային և գաւառական Յեղկոմների առաջ փոխադրական պահկութեան անհրաժեշտութիւնը յայտարարելու մասին, մասնանշելով նրա նպատակը և թէ նրա համար պահանջուող սայլերի քանակը:

Առանձին բացառիկ դէպքերում, երբ փոխադրական պահկութիւնը կրում է համապետական բնոյթ, այդ հարցը վճռում է Ներքգործօղկումի կազմից:

4. Գոյութիւն ունեցող բոլոր տեղական կազմակերպութիւնները, որոնք կապ ունեն փոխադրական պահկութեան հետ՝ իրենց գործունէութեան շրջանում ենթարկւում են Ներք. Գործերի Ժողովրդական Ամխարհատին և նրա տեղական օրգանների կարգադրութիւններին:

5. Փոխադրութիւնների ղեկավարութիւնը և փոխադրական պահկութեան ենթարկւած անձանց թէ նպատակայորժար օգտագործումը և թէ նրանց իր ժամանակին վարձատրումը վերապահւում են տեղական անտեսական հիմնարկութիւններին:

6. Փոխադրական պահկութիւնը սահմանւում է այն 16-ից մինչև 50 տարեկան քաղաքացիների համար, որոնք չեն գտնւում Կարմիր Բանակի շարքերում:

Այն բոլոր անձինք, որոնք ունեն ձիւր կամ բռնելու ու լծելու այլ անասուններ, ինչպէս և փոխադրական գանազան միջոցներ, պարտաւոր են ներկայացնել այն: Բոլոր քաղաքացիները, բացի կանացի սեռից և այն անձերից, որոնք ակնեիւրէն իրենց ուղղական ղրութեամբ անընդունակ են այդ պահկութիւնը կատարել, պարտաւոր են մասնակցել փոխադրական պահկութեանը և իրենց անձնական աշխատանքով:

7. Ամեն մի քաղաքացի պարտաւոր է ենթարկւել փոխադրական պահկութեան՝ զաշտային աշխատանքների ժամանակ 3 օր մի ամուս ընթացքում, իսկ ձմեռն էլ 7օր մի ամուս ընթացքում:

8. Փոխադրական պահկութեան ենթարկւողները իրաւունք

չունեն մինչև փոխադրութեան պահանջած նորմաները կատարելը թողնել իրենց աշխատանքները: Աշխատանքը ինքնակամ թողնողները կամ հակառակ դնացողները և կամ թէ պահկութիւնից խուսափողները պատասխանատու են ժողովրդական Դատարանի առաջ իրենց այդ սարքառութի համար:

9. Փոխադրական պահկութեան վարձաչափը որոշելիս պէտք է հիմք ընդունել ժողկոմների Խորհրդի կողմից սահմանուած նորմաները և ներկայացնել այն Պրոֆմիութիւնների Խորհրդին, Աշխատկոմատին և Ներքժողկոմատին ի հաստատութիւն:

Փոխադրական պահկութիւն կատարող քաղաքացիները պահկութեան ամբողջ ընթացքում ստանում են սահմանուած թէ պարենը և թէ ֆուրաժը ձրխաբար:

10. Այն քաղաքացիները, որոնք պահկութեան ժամանակկրում են անասունների կորուստներ, ստանում են դրանց համար դրամական վարձատրութիւն:

11. Ներքին Գործոց ժողովրդական Ամիսարիատի և Կրա տեղական օրգանների վրա պարտականութիւն է դրւում Յեղաբիւնայի դատին յանձնելու այն պաշտօնատար անձանց, որոնք յայտարարւած փոխադրական պահկութիւնը ոճրաբար կամ անփոյթ կօդատարործեն և կամ թէ անկանոն ձևով կվարձատրեն պահկութեան ենթարկւածների աշխատանքը:

12. Ներքգործժողկոմը տեղական Յեղկոմների միջոցով պէտք է հաշւէառման ենթարկէ փոխադրական պահկութեան կատարման ընդունակ անձանց և նոյնպէս ձիերը, լծելու կամ բեռնելու այլ անասունները, ինչպէս և փոխադրական միջոցները:

Ժողկոմների Խորհրդի Նախագահ՝ Ա. Մեամնիկեան (Ա. Մարտունի)

Ներքգործժողկոմ՝ Աւիս

Քարտուղար՝ Մ. Դարարէկեան

Հր. «Խորհրդային Հայաստան»

1921 թ. Օգոստոսի 20 № 151.

Դ Ե Կ Ր Ե Տ

Աւիստանքի պահկութեան մասին

1921 թ. Օգոստոսի 10

1. Հ. Ս. Խ. Հ. տեղիտորիայում մտցնում է աշխատանքի պահկութիւն:

2. Աշխատանքի պահկութեան նպատակն է ընդհանուր պետա-

կան ու տեղական նշանակութիւն ունեցող աշխատանքներ կատարելը, որպիսիք են՝ վառելիքի հայթայթումը, արանսպորտը, ձիւն մաքրելու աշխատանքները, ժողովրդական շարիքների վերացման ու համաճարակների դէմ մաքսութիւն համար:

3. Աշխատանքները կարող են լինել անյետաձգելի կամ տար-կէտու մի թոյլատրող:

4. Եթէ աշխատանքը թոյլատրում է տարկէտումն՝ այդ դէպ-քում աշխատանքի կատարման անհրաժեշտութեան նախաձեռնու-թիւնը պատկանում է թէ առանձին ժողկոմատներին և թէ Գաւ-յեղկոմներին:

Այս մարմինները յայտնում են Աշխտոլկոմատին իրենց յա-րուցած ենթադրութիւնների մասին: Աշխտոլկոմատը մշակում է մօտակայ աշխատանքների ծրագիրը և ներկայացնում այն ժող-կոմների խորհրդին ի հաստատութիւն:

5. Բացառիկ դէպքերում, երբ աշխատանքները անյետաձգելի բնոյթ ունեն՝ այդ աշխատանքների կատարման անհրաժեշտութեան հարցը վճռում է. Գաւյեղկոմն իր ամբողջ կազմի պատասխանա-տուութեամբ:

Գաւյեղկոմն այս մասին անյապաղ յայտնում է ժողկոմների խորհրդին և Աշխտոլկոմատին, միաժամանակ սկսելով ի կատար ածել իր ընդունած վճիռը:

6. Անհրաժեշտութեան դէպքում, երբ կարիք զգացւի գործի մէջ առնել կենդանի և անկենդան ինվենտար, այդ մասին որոշում է կայացնում այն մարմինը, որը վճռում է այս կամ այն աշխա-տանքը կատարելու անհրաժեշտութեան հարցը:

7. Աշխատանքի պահկութիւնը տարածւում է արական սեռի բոլոր քաղաքացիների վրա 16-ից մինչև 50 տարեկան հասակը:

8. Ձեն ենթարկւում աշխատանքի պահկութեանը—

ա. Բժշկական պերսոնալը, որի աշխատանքը վարակման ու-ժեղ վտանգի հետ է կապւած, համաճարակների դէմ կռուող ընդ-հանուր և յատուկ համաճարակի հիւանդանոցներում և ամբուլա-տորիաներում աշխատող բժշկական աշխատակորները, աներում աշխատող բժիշկներն ու նրանց օգնական առողջապահ բժիշկները, ախտահաններն ու հիւանդներին փոխադրող սանիտարները, բան-ւորները, որոնք արտաժամեայ աշխատանքներով ամեն օր 4 ժա-մից ոչ պակաս են զբաղւում:

բ. 1. Յեղկումների անդամները, 2. Կենտրոնական ու տեղական պրոֆմիտիւթիւնների խորհուրդների անդամները, 3. Հ. Ս. Խ. Հ. Միացեալ Պրոֆմիտիւթիւնների Կենտրոնական Կոմիտէի անդամները, 4. Ժողկոմներն ու Կենտրոնական ժողկոմատների Կոլեգիայի անդամները, 5. Կենտրոնական հիմնարկութիւնների և Տեղական Յեղկոմների Բաժինների Վարիչները 6. Տեղական Պրոֆմիտիւթիւնների Դախագանները:

ՇԱՆՕՔՄԻԹԻՆ.—Աշխտողիմատը, համապատասխան ժողկոմատի հետ համաձայնութեան գալով, կարող է աշխատանքի պահկութիւնից ազատել նաև խորհրդային այլ հիմնարկութիւնների ծառայողներին:

9. Մասապական բնաւորութիւն կրող ստիպողական պահկութեան աշխատանքները, որոնց ենթարկուած են քողաքացիները, բաժանուած են՝

ա. Առաջին խմբի աշխատանքների, այն է ծանր ֆիզիքական աշխատանքների (օր. ձիւն մաքրելը, ծանրութիւնների տեղափոխութիւնը, փայտ պատրաստելն ու բեռները, դաշտեր մշակելը, հեղեղումների դէմ կռուելը, առողջապահական մաքրումներ և այլն):

բ. երկրորդ խմբի աշխատանքների, որոնք առանձին ֆիզիքական ուժի գործադրելու կորիք չունին և յատուկ վնասակար պայմաններում չեն կատարուում (օր. հիւանդանոցներ մաքրելը, հիւանդների հոգատարութիւնը, կուլտ-լուս. աշխատանքը և այլն):

Աշխատանքի ամեն մի պահկութեան մասին յայտարարելու ժամանակ պէտք է որոշել, թէ նա որ խմբին է վերաբերուում:

10. Առաջին խմբի աշխատանքներին չեն ենթարկուում—

ա. 18 տարեկանից ցած տարիք ունեցողները:

բ. Հիւանդները, համաձայն Առժողկոմատի ու Աշխտողիմատի Կոնսուլտացիոն համաձայնութեամբ մշակւած ցուցակի:

գ. Առանձին անհասներն ու այն արհեստաւորները, որոնց ալքոֆեսիոնալ ընդունակութիւնը կարող է տուժել ծանր ֆիզիքական աշխատանքից:

11. Առժողկոմատն իր տեղական օրդանների միջոցով հաշիւ է առնում այն բոլոր անձանց, որոնք ենթարկուած են աշխատանքի պահկութեան:

12. Աշխատանքի պահկութեանը ենթարկելու որոշումները կիրառուում են տեղական յեղկոմների բաժինների միջոցով:

13. Աշխատանքի պահկութեան իրաւորժման ընդհանուր դե-

կապարութիւնը վերադաճեալ է Աշխոյեղումատին, իսկ հսկողութիւնը Աշխոյեղումատին և Պրօֆմիութիւններէ Խորհրդին:

Այս դեկրետի իրագործման հրահանգը մշակում է Աշխոյեղումը, համաձայնութեան գալով Պրօֆմիութիւնների Խորհրդի հետ, իսկ պատշաճաւը դէպքերում նաեւ համապատասխան ժողկոմատների հետ:

14. Աշխոյեղումատին և Գաւեղեղումներին տրուում է բացառիկ իրաւունք ենթարկելու՝ —

Ա. ժողգատարանին այն անձանց,

ա. որոնք մեղադրուում են հաշտեալումից խոյս տալու և աշխատանքի պահելութեանը հնարկայանալու մէջ:

բ. Աշխատանքից փախչելու և ուրիշներին նոյնն անելու սպառնալու մէջ:

գ. Կեղծ փաստաթղթերից օգտուելու, այլ և աշխատանքի պահելութիւնից խուսափողներին օժանդակելու նպատակով նման փաստաթղթեր պատրաստելու և իբրեւ պաշտօնատար անձ նոյն նպատակներով դիտաւորեալ սուտ տեղեկութիւններ տալու մէջ:

դ. Աշխատանքի գործիքներն ու նիւթերը դիտաւորեալ կերպով փչացնելու մէջ:

ե. Աշխատանքներն անփոյթ կաղմակերպելու և աշխատաւորութիւնը ոչ անտեսօրէն օգտուելու մէջ:

զ. Յիշատակած գործողութիւններին նպաստելու մեղադրանքներին թաղցնելու մէջ և այլն:

Բ. Յեղափրուեալի Դատարանին՝ բացառիկ դէպքերում, երբ մեղաւոր անձինք ցոյց են տել առանձին չարամտութիւն կամ թոյլ տել վերջիշած արարքների կրկնութիւն:

Ժողկոմների Խորհրդի Նախագահ՝

Ա. Մեամնիկեան (Ալ. Մարտունի)

Ժողկոմխորհի Քարտուղար՝ Մ. Ղարաբէկեան:

Հր. „Խորհրդային Հայաստան“

1921 թ. Օգոստոսի 28 № 159

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Փոխադրական պանկութեան վարձաչափի մասին

1921 թ. Օգոստոսի 31

Ի լրումն ժողովոմների խորհրդի Օգոստոսի 3-ի փոխադրական պանկութեան գեկրեաի ժամանակաւորապէս՝

1. Հայաստանը բաժանել չորս գօտու՝ —

ա. Առաջին գօտու մէջ մտնում են Ալէքսանդրապօլի և Նոր-Բայազէտի գաւառները:

բ. Երկրորդ գօտու մէջ մտնում են Երևանի և Էջմիածնի գաւառները:

գ. Երրորդ գօտու մէջ մտնում են Ղարաբաղի խոսայի, Նիկիջանի և Լոռու գաւառները:

դ. Չորրորդ գօտու մէջ մտնում են Զանգեզուրի և Դարալագեզի գաւառները:

2. Առաջին գօտում իւրաքանչիւր փութ բեռը մի վերստ տանելու համար վճարել 50 ռուբլի:

Հեծելաձիուն մի վերստ տանելու համար վճարել 250 ռուբլի:

Երկրորդ գօտու իւրաքանչիւր փութ բեռը մի վերստ տանելու համար վճարել 75 ռուբլի:

Հեծելաձիուն մի վերստ տանելու համար վճարել 375 ռուբլի:

Երրորդ գօտում իւրաքանչիւր փութ բեռը մի վերստ տանելու համար վճարել 100 ռուբլի:

Հեծելաձիուն մի վերստ տանելու համար վճարել 500 ռուբլի:

Չորրորդ գօտում իւրաքանչիւր փութ բեռը մի վերստ տանելու համար վճարել 150 ռուբլի:

Հեծելաձիուն մի վերստ տանելու համար վճարել 500 ռուբլի:

13. Եթէ Օգոստոսի 3-ի գեկրեաի 9-րդ յօդուածում սահմանուած կէտը (ֆուրաժ) փոխադրական պանկութիւնը կատարող քաղաքացիները չըստանան վերոյիշեալ վարձաչափը կրկնապատկուում է:

14. Սոյն որոշումը կեանքի մէջ կիրառուում է հետագորով:

Ժողովոմիւրնի Նախագահ՝

Ա. Մեանսիկեան (Ալ. Մարտունի)

Ներքգործ ժողովոմ՝ Աւիս

Ժողովոմների խորհրդի Քարտուղար՝ Մ. Ղարաբեկեան

Հր. „Սորհրդային Հայաստան“

1921 թ. Հոկտեմբերի 26



ՀՀ Ազգային գրադարան



NL0835869

1492

39